

ստացուել է . . . 8,450-54 4,704-89

ԵԼՔ


Վճարուած է ձեռք բերած
0/0 թղթերի համար 7721 ռուբլի
02 կոպ. և 1908 թուի դրամա-
դիսի հաշիւը տպագրելու համար
35 ռուբլի 70 կոպէկ

Ընդամենը . . . — — 7,756-72

Առ 1 յունուարի 1910 թ.

կայ պատրաստ . . . 119,697-53 192-09

Մանօրութիւն.—Դրամագլուխը գտնուում է Մոսկուայի
նահանգական գանձարանում և պէտք է աճի 1883 թուից 125
տարուայ ընթացքում՝ մինչև գումարը հասնի 12 միլիոն ռուբլու.
իսկ յետոյ կը դործագրուի ուսումն. հիմնարկութիւնների հաս-
տատուութեան և կտակաբարձի անունով որդեգիրներին համար:



ԵՂԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆ
և ՅՈՎԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ

Միաբան ս. Էջմիածնի Եղիա վարդապետ հասան Ջա-
լալեան 75 տարեկան, օգոստոսի 23-ի գիշերը յանկարծա-
մահ, առանց տանջանքների վախճանուեց արդարի մահով,
և 25-ին կատարուեց յուղարկաւորութիւնը պատշաճ հան-
դիսաւորութեամբ. և բոլորը, մատուցանելով արժանաւոր
յարգանքը արժանաւոր կրօնաւորին, մտածում էին, որ
Եղիա Հայր-սուրբին փոխարինող էլ չըկայ:

Հանդուցեալը, որ աշխարհական ժամանակ Ձալալ էր կոչուում, իւր ազգական Սարգիս արքեպիսկոպոս Հասան — Ձալալեանի խնամքի տակ ուսել էր Սանահնի վանականն և Ներսիսեան հոգեւոր դպրոցներում և ապա նոյն արքեպիսկոպոսի հոգածութեամբ Կ. Պօլսում կատարելագործել էր իւր ուսմունքը հայկաբանութեան և կրօնական առարկաների մէջ Տէրոյեան (Չամուռճեան) Յովհաննէս պատուելու մօտ։ Վերադառնալով Կովկաս Ձալալը վարել է ուսուցչութեան պաշտօններ Երևանի, Ծուշոյ թեմական դպրոցներում, Նուխույ եկեղ. ծխակ. դպրոցում դասաւանդելով հայերէն և կրօնական առարկաները։ 1867 թուին մտնելով Մայր Աթոռի միաբանութեան շարքը կարգուել է ժառանգաւորաց դպրոցում վերակացու և հայերէնի ու կրօնական առարկաների դասատու։ 1868 թ. օգոստոսի 16-ին Սևանի վանքում Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ձալալեանից ձեռնադրուել է արեղայ կոչուելով Եղիա։ 1869 թ. Մայիսի 6-ին ստացել է վարդապետական կոչումն։ Եղիա վարդապետը ս. տեղիքը տեսնելու և ուխտ կատարելու համար գնացել է Երուսաղէմ, ուր կացել է մի տարուց աւելի։ Վերադառնալով արտասահմանից կարգուել է Սևանայ վանական դպրոցի ուսուցիչ, այդ ժամանակ հրատարակել է Մանուէլ վարդ. Գիւմուշխանեցիի «Պատմութիւն անցից Սևանայ» գրքոյկը։ 1879 թ. յունվարի 2-ին կարգուել է Ամարասի վանքի վանահայր։ 1885 — 86 Վարել է Մայր Աթոռի ճեմարանում ուսուցչի պաշտօն դասաւանդելով ստորին դասարաններում կրօնական առարկաները։ 1893 թ. գեկտեմբերի 8-ին Սինօգի օրագրով կարգուել է Մուղնույ վանահայր։ 1895 թ. նոյեմբ. 9-ին արձակուելով այդ պաշտօնից նոյն ամսի 20-ին կարգուել է Վաղարշապատի շրջանի գործակալ, Հանդուցեալ Մկրտիչ կաթողիկոսի կոնդակով 1896 թ. յունվարի 15-ին կարգուել է տպարանական ժողովի անդամ և նոյն կաթողիկոսի յանձնարարութեամբ ձեռագիր Աստուածաշունչները համեմատելիս՝ նկատում է Մնացորդաց գրքի թարգմանութեան նոր օրինակ, յայտնում է պրօֆ. Գր. Խալաթեանին, որը և հրատարակում է։

1896 թ.-ից սկսած մինչև իւր մահուան օրը վարում էր Մայր Աթոռի հանգերձապահի պաշտօնը, կատարելով զանազան մասնաւոր յանձնարարութիւններ պատուով և արդիւնաւորութեամբ:

Ամեն տարի մեծ պատին քարոզում է էջմիածնի և Սուրմալուի դաւառների հայ գիւղերում:

Լաւ հայկաբան էր և ս. Գրքի խորին հմտութիւն ունէր: Անկեղծ հաւատացող էր և լաւ կրօնաւորի տիպ. — հեղ, հիւրասէր, պարտաճանաչ, ողորմած, աղքատասէր:

Նրա դուռը բաց էր հայի, քուրդի, թուրքի և հրէայի առաջ. և ամենքին էլ շահում էր ինչպէս և ինչքան կարող էր, առանց ծառայի անձամբ պատրաստելով և մատակարարելով հաց, կերակուր, չայ, սուրճ և լին: Նա համարձակ էր իւր դիտողութիւնների մէջ, սրամիտ և աշխոյժ խօսակցութեան ժամանակ և վերին աստիճանի շարժուն: Նրա նուիրական ուխտատեղին էր Փոքր Մասիսը, որի վերայ բարձրացել է մի քանի անգամ: 1905 թ.-ի հայ-թուրքական ընդհարումների ժամանակ անգամ նա առանց կասկածելու՝ թուրք և քուրդ գիւղերից անցնելով գնաց Փոքր Մասիս իւր ուխտը կատարելու: Հարցնողներին առում էր, «Մեծ Մասսի վերայ անկարելի է բարձրանալ, Փոքր-Մասսի գլխից նայում եմ Մեծ-Մասսի գագաթին, փափագս առնում և ուխտս կատարում»: Նայելով նրա տարիքին և ուղղանկիւն կռացած կազմուածքին, պէտք է զարմանալ նորա հաւատի մեծութեանը, որով զօրացած՝ նա կատարում էր Փոքր Մասսի վերելքը:

Մաղթելով հանգիստ և երկնից արքայութիւն Եղիա Հայր-սուրբին, ամենայն համարձակութեամբ կարող ենք ասել, որ նորա յաւիտենական յիշատակը օրհնութեամբ է և կը լինի:

Ամսիս 24-ին խօլերայից վախճանուեց Մողնոյ վանքում, նոյն վանքի վանահայր և Աբարանի գործակալ Յովէլ վարդապետը 65 տարեկան հասակում: Տէր լուսաւորէ հանգուցելոյ հոգին: